Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
սեպտեմբերի 10-ի նիստի N 41
արձանագրային որոշման

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր Ի Պ Լ Ա Ն

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՊԱՌՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ՝ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

NN ը/կ	**Գործողության անվանումը**	**Պատասխանատուն**	**Կատարման ժամկետը**
1.	Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանի նկատմամբ այլ անձի բացառիկ իրավունքին առնչվող գործունեություն իրականացնող զուգահեռ ներմուծումներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտների բացահայտում և հաշվառում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2015 թ. հոկտեմբեր
2.	Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միության անդամակցության պայմաններում զուգահեռ ներմուծողներին օրենսդրության փոփոխությունների և գործող օրենսդրության պարզաբանումների տրամադրում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2015-2018 թթ. պարբերաբար
3.	«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 26-րդ հավելվածի Արձանագրության V բաժնով սահմանված ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքների սպառման սկզբունքի կիրառման արդյունքում հնարավոր հետևանքների վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում և ազդեցության գնահատում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016 թ. հուլիս

4.	Աջակցություն զուգահեռ ներմուծողներին՝ ապրանքային նշանի իրավատիրոջ հետ բանակցություններ վարելու հարցում, որպես առևտրային ներկայացուցիչներ կամ դիստրիբյուտորներ վերջիններիս հետ համագործակցության նպատակով:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2015-2018 թթ. պարբերաբար
5.	Մտավոր սեփականության գործակալության աշխատակազմում պատասխանատու աշխատանքային խմբի ստեղծում՝ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի միջազգային սկզբունքի սպառման հետ կապված այցելուներին խորհրդատվության տրամադրման նպատակով:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2015 թ. սեպտեմբեր
6.	ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքէջում՝ Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի տարածաշրջանային սպառման սկզբունքների և իրականացվող անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների մասին տեղեկատվության տեղադրում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2015 թ. հոկտեմբեր
7.	Մտավոր սեփականության գործակալության աշխատակազմում «թեժ գծի» կազմակերպում, որտեղ կընդունվեն և կվերլուծվեն «զուգահեռ ներմուծմանն» առնչվող բանավոր հարցերն ու առաջարկությունները:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2015 թ. սեպտեմբեր
8.	Վերապատրաստման ցանկություն հայտնածների (զուգահեռ ներմուծողների) բազայի ստեղծում, որն իր մեջ կներառի նաև զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի շրջանակներում մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2015 թ. դեկտեմբեր